— Ծնողները աւելի անպիտան են. նրանք մի առանձին պատիւ են համարում, որ իրանց զաւակները զարդարում են փաշայի խնջոյքները:

Արդէն ճաշին մօտ էր, երբ մէք վերադարձանք վարպետ Փանոսի տունը: Ասլանը իսկոյն առանձնացաւ իր սենեակում: Վարպետ Փանոսը մտաւ իր գործարանը: Իսկ ես գնացի այգին միրգ ուտելու:

Դ. ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ՓԱՇԱՆ

Մի առաւօտ Ասլանը ասաց ինձ, թէ ինքը ժամադիր է եղած գնալ քաղաքը, փաշային ներկայանալու, եւ ցանկանամ է ինձ էլ իր հետը տանել: Ես շատ ուրախացայ, որովհետեւ մինչեւ այն օրը ոչ մի բարձր պաշտօնակալ չէի տեսած:

Փաշան կենամ էր քաղաքում, այսինքն՝ բերդի մէջ: Այգեստանից մինչեւ այնտեղ թէեւ շատ հեռու չէր, այնոամենայնիւ, մենք գնացինք ձիերով: Ձիերը, զարդարուած ասիական շքեղ ասպազէնքով, ուղարկուած էին փաշայի կողմից երկու ղավազների հետ, որոնք, մեր առջեւը ընկած, տարան մեզ: Թէեւ արգելուած էր քրիստոնեաներին ձիով քաղաքը մտնել, բայց դա մի առանձին պատիւ էր, որ ցոյց էր տալիս նահանգապետը իր քաղաքի նորեկ հիւրին:

Երբ մօտեցանք քաղաքին, նա մի առանձին կախարդական տպաւորութիւն գործեց իմ վրայ. գուցէ այդ այն պատճառով էր, որ առաջին անգամ տեսնում էի մի այնպիսի ընդարձակ մարդկային բնակութիւն:

Քաղաքը գտնւում էր ծովակի ափի մօտ եւ շատ հիանալի տեսարան էր ներկայացնում: Նա շրջապատած էր կրկին պարիսպներով, որոնք ամրացուցած էին բրգաձեւ աշտարակներով, եւ մի խորունկ խրամատ դրսից բոլորում էր քաղաքի շուրջը: Ասլանը բացատրեց ինձ, թէ այդ խրամատը նրա համար է, որ պաշարման ժամանակ լցնում են ջրով, կամուրջները վեր են առնում, թշնամուն ներս չթողնելու համար: Բացի այդ արտաքին ամրութիւններից, քաղաքը ունէր եւ միջնաբերդ, որ բնութիւնը ինքն էր հրաշակերտել: Քաղաքի հիւսիսային մասում տարածւում էր կէս փարսախ երկարութեամբ մի քարաժայռ, որը հետզհետէ բարձրանալով, սեպաձեւ դիրք էր ընդունում: Այդ սեպի գլխին, խորին ժամանակներից, վեյանձնաբար նստած էր մի փառաւոր ամրոց: Հայոց լեգենդական աւանդութիւնը այդ ամրոցը ընծայում էր Ասորեստանի թագուհի Շամիրամին:

Մտնելով քաղաքադռնից, ես մի անբացատրելի սարսուռ զգացի, որ առաջ էր գալիս ե՛ւ ուրախութիւնից, ե՛ւ երկիւղից: Ամբողջ քաղաքը կարծես